

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Գ. Բ. ՂԱՐԻՐՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

«Համբերություն, ներողամտություն, բարյացակամություն, ուրիշի և րախությունը բաժանելու, տխրությունը զգալու կարողություն. եթե տարիքն առած մտավորականը այս հատկություններից զուրկ է, ապա ինչի է պետք նրա երկարակեցությունը: Անվանի գրականագետ, բանասեր, թատերագետ, բանաստեղծ, պրոֆեսոր Արշալույս Միքայելի Արշարունու առաջացած հասակում ասված այս խոսքերը լիովին բնորոշում են իրեն՝ գիտնականին, մարդուն, քաղաքացուն, որն անցնելով կյանքի երկար իրադարձություններով հարուստ ու հակասական ուղի, երբեք չզաղարեց ստեղծագործել, կիսել ուրիշների ուրախությունն ու տխրությունը, մնաց մեծ մարդ ու ընկեր, իսկական հայ մտավորական:

Արշալույս Արշարունին ծնվել է 1896 թ. նոյեմբերի 17-ին Հայաստանի Կարսի մարզի Կաղզվան քաղաքում: 1904 թ. նա ընտանիքով տեղափոխվում է Նոր Նախիջևան, սովորում է տեղի թեմական դպրոցում: Նրա ուսուցիչներն էին ականավոր հայագետներ Հրաչյա Աճառյանը, Երվանդ Շահազիզը, Գևորգ Զորեքչյանը (հետագայում՝ կաթողիկոս), Աբրահամ Զամինյանը, որոնց բարերար ազդեցությամբ դեռ պատանի հասակից նա գրական փորձեր է անում, տպագրվում Ստեփան Լիսիցյանի խմբագրությամբ Թիֆլիսում լույս տեսնող «Հասկեր» մանկական ամսագրում, որի 1912 թ. օգոստոսյան համարում հատվածներ է հրապարակում՝ իր առաջին, բայց ձևավորված ստեղծագործությունները: Արշարունու չափազանց գովածքները երևում են Նոր Նախիջևանում լույս տեսնող «Գաղութ», «Համայնք», «Գրիչ» պարբերականներում: Թիֆլիսի, Երևանի, Սիմֆերոպոլի, Նոր Նախիջևանի մամուլում գրախոսականներ են տպագրվում Արշարունու բանաստեղծությունների մասին: Իրանց մեջ ընդգծվում են երիտասարդ հեղինակի բանաստեղծական որոշակի՝ սոցիալական տրամադրությունները, անկեղծությունն ու բնականությունը:

1918 թ. ավարտելով թեմական դպրոցը, Արշարունին որպես ուսուցիչ պաշտոնավարում է հայաբնակ Զալթը գյուղում, ապա Ցալթայի ու Ղարա-սուբաղարի հայկական դպրոցներում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արշարունին զորակոչվում է բանակ՝ ծառայում Տագանրոգ քաղաքում տեղավորված 275-րդ պահեստի գնդում: Ռուստովում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո Արշարունին գաղափարի համոզմունքով Կարմիր գվարդիայի շարքերում էր, ապա ղեկավարում է Դոնի նահանգի ժողտնտեսորհի կուլտուր-լուսավորչական բաժինը, որտեղ էլ նա ընդունվում է Կոմունիստական կուսակցության շարքերը (1917), զբաղվում նորաստեղծ մի շարք թերթերի ու հանդեսների կազմակերպման հարցերով: 1918 թ. Նոր Նախիջևանում լույս է տեսնում Արշարունու «Ըմբոստացումի ժամեր» խորագրով արձակ բանաստեղծությունների ժողովածուն, իսկ 1919 թ.՝ «Վերջալույսի ափունք»-ը: 1920—1921 թթ. Արշարունին Ալեքսանդրապոլում (այժմ Գյումրի) հրատարակում է «Պոեմներ», «Կարմիր Հաղթանակ», «Լենին», իսկ 1921 թ. Սիմֆերոպոլում՝ «Վաղվան օրը» ժողովածուները:

1921 թ. Արշարունին տեղափոխվում է Մոսկվա, սովորում Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում, աշխատում Ռուսաստանի լուսժողովոմա-

տում՝ Ա. Լուսնաշարսկու և Ն. Կրուպսկայայի ղեկավարությամբ: 1922 թ. լույս են տեսնում Արշարունու «Պրուտ Արփի», «Ճերմակ վալս», «Sophie» չափածո գործերը: 1926 թ. նա դասախոսություններ է կարդում Մոսկվայի Սվերդլովի անվան կոմունիստական, Արևելքի ժողովուրդների համալսարաններում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում (մանկավարժական, դրական, թատերական, կինեմատոգրաֆիայի):

1929 թ. Արշարունին արգեն պրոֆեսոր էր, իսկ 1960 թ. ստանում է Հայաստանի Արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

1934 թ., երբ Մաքսիմ Գորկու գլխավորությամբ ստեղծվում է Խորհրդային գրողների Միությունը, Արշարունին դառնում է նրա առաջին անդամներից մեկը, ղեկավարում Գրողների միության ազգային գրականության բաժինը, իր նպաստը բերում Հայաստանի Գրողների միության կազմակերպմանը, անմիջականորեն մասնակցում Դադստանում, Բաշկիրիայում և Չուվաշիայում գրական կազմակերպությունների ստեղծմանը:

Մեծ է Արշարունու ավանդը գրական ստեղծագործությունների պոետիկ պահանջի, նշանավոր գրողների, նրանց հասարակական և քաղաքական ինքնահաստատման գործում: Նա տասնյակ հոգվածներ է հրատարակել հայ, վրաց, թաթարական գրականության ու արվեստի կարևորագույն հարցերի, հայ-ռուսական մշակութային կապերի, հայ հասարակական մտքի և առանձնապես պարբերական մամուլի վերաբերյալ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Արշարունին որպես լրագրող և հրապարակախոս, լայն գործունեություն է ծավալում: Լինելով Զին-հրատի ավագ խմբագիր, նա պատրաստում և իր խմբագրությամբ հրատարակում է բազմաթիվ գրքույկներ, թուղթիկներ, ակնարկներ և հոգվածներ: Այդ տարիներին Ա. Արշարունու, գրող և հասարակական գործիչ Հմայակ Սիրասի ջանքերով Մոսկվայում ռուսերեն, հայերեն և այլ լեզուներով լույս են տեսնում «Կարմիր բանակի ագիտատորի բլոկնոտը», բազմաթիվ պալկատներ, կոչեր, որոնք լայնորեն տարածվում են Հայրենիքի պաշտպանների մեջ:

1942 թ. Արշարունու խմբագրությամբ ռուսերեն լույս է տեսնում «Կարմիր բանակայինի գրադարան» մատենաշարի № 2 գրքույկը՝ Նինա Պոմենկովայի «Զինվորի մարտական ընկերը» վերնագրով: Տոգորիս գրողը, լինելով ռազմաճակատում, նկատել է Արշարունու բազմաթիվ հոգվածների նշանակալի ազդեցությունը հայ ռազմիկների վրա: 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթում արտատպվել են Արշարունու բազմաթիվ հոգվածներ՝ նվիրված մեր ժողովուրդների ազատության ու անկախության համար մղվող պայքարին:

Պատերազմի տարիներին Արշարունին գրում է «Ավետիք Իսահակյան» գիրքը՝ նվիրված վարպետի հայրենասիրական գրչին:

Խոշոր ու բազմակողմանի էր Արշարունու գրական վաստակը՝ նվիրված գրականագիտական, արվեստի, մամուլի, պատմության, հասարակական այլ հարցերի ուսումնասիրությանը: 1925 թ. ռուսերեն լույս է տեսնում «Խորհրդային Միությունն է Արևելքի ժողովուրդների հիմքը» գիրքը, որը թարգմանվեց հայերեն և միության ժողովուրդների մի քանի լեզուներով: 1920—30-ական թվականներին Մոսկվայում տպագրվում են Արշարունու «Ինչ է կատարվում Զինաստանում», «Բեհայիզմ», «Բաբիզմ», «Պեպոն ֆիլմում», «Հրաշյա ներսիսյան», «Խորհրդային Արևելքի էպոսը» գործերը, որոնք վկայում են հեղինակի լայն հետաքրքրությունների և բազմակողմանի գիտելիքների մասին: 1950—70-ական թվականներին առանձին թերթերով լույս են տեսնում հրատարակվում են նրա «Մոսկվայի համալսարանի հայ ուսանողությունը», «Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր ինտելիգենցիան», «Հայ թատերական մտքի պատմությունից», «Հայ ժողովրդական թատերախաղերը», «Մոսկվայի հայ մամուլը», «Հանդիպումներ անցյալի հետ», «Նշանավոր գրքերի ճակատագրերը», «Մարդիկ և տաղիներ», «Զեռագրերի աշխարհում», «Հուշանվերներ», «Մոսկվայի համալսարանը և հայ մտավորա-

կանությունը» աշխատությունները, որոնք ջերմ ընդունելություն են գտնում ընթերցողների շրջանում: Հավատարիմ իր՝ «հրապարակ հանել նոր աշխատություն, նշանակում է կյանքում չկորցնել ոչ հոանդ, ոչ աշխատասիրություն» սկզբունքին, Արշարունին իր աշխատություններում հենվում է տարիներ շարունակ հավաքած արխիվային նյութերի ու գրականության վրա: Ընթերցողին է ներկայացնում պատմության ու մշակույթի նորությունները, հետաքրքիր էջեր՝ համեմատորված բազմաթիվ ու բազմակողմանի հավաստի փաստերով:

Տակավին 1920 թ. մինչև իր կյանքի վերջին տարիները Արշարունին զբաղվում է իսլամագիտությամբ, ստեղծում է մի շարք արժեքավոր աշխատություններ Ղուրանի մասին: Ինչպես Հ. Դիզյակինը, Բելլաևը, Ն. Սմիտովը, Լ. Կլիմովիչը, Մ. Տոմարայը, Ծ. Շտեմբերգը, Լ. Խատիևը, Վ. Զախոգեբը, նա ևս խորհրդային իսլամագիտության ավագ ներկայացուցիչներից էր, զբաղվում էր արաբագիտության, արևելագիտության տարբեր ճյուղերով: «Արևելագիտական հանրագիտարանը» նշել է Արշարունու և նրա դուստր Նինել Արշարունու գիտական վաստակը: Հայր և դուստր այդ բնագավառում հրատարակել են մոտ 25 աշխատություն, օգնել երիտասարդ կադրեր պատրաստելու գործին: Արշարունին Ա. Լուևաչարսկու, Վ. Ֆրիչի, Ն. Մառի հետ միասին մասնակցել է ռուս I «Գրական հանրագիտարանի» հիմնադրմանն ու խմբագրմանը: Նա ակտիվ աշխատակցում էր «Սովետական Մեծ Հանրագիտարանին», «Սովետական Փոքր Հանրագիտարանին», որոնց էջերում տպագրվել են նրա «Հայ գրականություն», «Վրաց գրականություն», «Շոթա Ռուսթավելի», «Միրզա Ֆաթալի Ախունդով», «Գալիմջան Իբրահիմով» և այլ բառ-հոգվածներ: «Գրական Հանրագիտարանի» 1-ին հատորի անդրանիկ հոդվածը գրել է Արշարունին. նա Հանրագիտարանի ստեղծողներից, խմբագիրներից և հեղինակներից էր, նրա Արևելյան գրականությունների բաժնի խմբագիրը: Իր ասպիրանտների հետ միասին նա եղել է Ինգուշեթիայում, ուսումնասիրել տեղի ժողովրդի գրականությունն ու մշակույթը, ուսանելով հրատարակել «По Ингушетии» ակնարկների գիրքը: Արշարունին գրել է ծավալուն աշխատություն՝ «Հայկական ժողովրդական թատերախաղերը» խորագրով, որ ի հայտ էր բերում նրա մշտական հետաքրքրությունը հայ թատրոնի և նրա գործիչների նկատմամբ:

Արշարունու ջանքերով Մոսկվայում, ռուսերեն լույս են տեսնում գրքուկներ Համբ. Բեկնազարյանի, Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, «Պեպո» կինոնկարի մասին, տպագրվում է Վաղարշ Վաղարշյանի «Սասունցի Դավիթը»: Մեծ են Արշարունու ծառայությունները հայ գեղարվեստական գրականության թարգմանության տեսության մշակման և հայ գեղարվեստական գրականությունը ռուսերեն լեզվով ընթերցողներին ներկայացնելու գործում: 1972 թ. Երևանում հրավիրված գեղարվեստական գրականության թարգմանության տեսության հարցերին նվիրված Համամիութենական կոնֆերանսում ունեցած իր ելույթում Արշարունին ընդգծում է ռուսերենի միջոցով Հակոբ Պարոնյանի, Պետրոս Դուրյանի, Սիամանթոյի, արևմտահայ և սփյուռքահայ գրականության արժեքների քարոզչության խիստ կարևորությունը: Հետպատերազմյան տարիներին Արշարունին ձեռնարկեց սփյուռքահայ ժամանակակից գեղարվեստական գրականության նմուշների՝ Մոսկվայում ռուսերեն լեզվով հրատարակման գործը, որի դրսևւորումներից էր «Օտար երկնքի տակ» ժողովածուի հրատարակությունը: Այն բարձր գնահատվեց ռուս մտավորականության կողմից: Հյուսիս, Արշարունին գործուն մասնակցություն է ունեցել Հայաստան-սփյուռք հոգևոր կապերի կայացման, առավել ևս՝ քաղաքական ճանաչման գործին, որի համար, իրոք, պահանջվում էր քաղաքացիական առաքելություն և արիություն: Նրա ջանքերով են լույս տեսնում Անդրանիկ Մառուկյանի, Անդրանիկ Անդրեասյանի, Արմեն Դարյանի պատմվածքների ժողովածուները: Արշարունու թարգմանությամբ հրատարակվում են Նահապետ Քուլակի հայրենիքը, Ալեքսանդր Շիրվանզադեի, Նար-Դոսի, Գաբրիել Սունդուկյանի ստեղծագոր-

ծուծությունները Դեռ 1928 թ. նա թարգմանել էր Արագու «Ընկեր Մուկուլը» պատմվածքը, որն արժանացել էր Մաքսիմ Գորկու բարձր գնահատականին։ Արշարունու թարգմանությամբ և խմբագրությամբ լույս են տեսել սփյուռքահայ գրողների մատենաշարերը, հայրենի գրողների՝ Ակսել Բակունցի, Ստեփան Զորյանի, Հրաչյա Քոչարի, Հմայակ Սիրասի և այլոց ստեղծագործությունները։

1973 թ. Երևանում հրատարակվում է Արշարունու «Նշանավոր գրքերի ճակատագրերը» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը պատմում է իր կյանքում անջնջելի հետք թողած գրքերի մասին, ընդգծում ընթերցողի պարտականությունը դրքի ու մշակույթի նկատմամբ։ Գրքում շրջանառության մեջ են դրվել նոր փաստեր Վահան Տերյանի, ռուսերենից հայերեն թարգմանած Լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքի, Մաքսիմ Գորկու հրատարակած գրքերի, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (Մկրտիչ էմինի թարգմանությամբ), Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության», հայատառ թուրքերեն գրականության, ռուսերեն լույս ընծայած Ի. Պատկաշյանի «Ընտիր երկասիրություններ» երկհատորյակի, Գր. Խալաթյանցի, Վարվառե Քանյանի, Գր. Զախուշյանի, Փ. Վարդանյանի գրական, թարգմանական գործունեության, 1870 թ. Պոլսում հայերեն հրատարակված Ի. Կոխովի ստեղծագործությունների, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Պուշկինի կյանքի և նրա ստեղծագործությունների գեղագիտական ազդեցության, «Կարմիր բանակային գրադարան» մատենաշարի և այլ գործերի մասին։ Արժեքավոր է Արշարունու «Մարդիկ և տարիներ» ժողովածուն, որտեղ ամփոփված են հեղինակի պատումները Ա. Իսահակյանի, Նար-Ղոսի, Ա. Լուսաշարսկու, Վ. Բրյուսովի, Ե. Շահազիզի, Ա. Բակունցի և այլ նշանավոր գրողների, արվեստագետների ու գիտնականների մասին։

Ավելի քան քառորդ դար Արշարունին համառ աշխատասիրությամբ գրել է իր «Ձևագրերի աշխարհում» գործը, ցույց տալով, որ «գիտության բնագավառում աշխատանքը պահանջում է ըմբոստություն, խիզախություն, համբերատարություն, անվերջ պրպտում»։

1977 թ. Հայկական թատերական ընկերությունը հրատարակում է Արշարունու «Հուշագրերը» վերնագրով գիրքը՝ նվիրված հայ թատրոնի ակա-նավոր գործիչների՝ Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Լևոն Քալանթարի, Վաղարշ Վաղարշյանի, Արմեն Արմենյանի, Վալիկ Վարդանյանի, Ուլազանյա Վարդանյանի հետ իր հանդիպումներին։

Արշարունին մեզ հնարավորություն տվեց ծանոթանալու ձեռագիր վի-ճակում ավարտված «Սուրեն Քոչարյան» մենագրությանը։ Հեղինակը երկար տարիներ ջերմ հարաբերությունների մեջ էր ականավոր արվեստագետի հետ։ Մենք բազմիցս ներկա ենք եղել նրանց հանդիպումներին։ Մի քանի գլուխներից բաղկացած այդ գիրքը բացահայտում է վարպետի ասմունքային գլուխգործոցները, վերլուծում է նրա ստեղծագործական բազմակողմանի շնորհները։ Արշարունին տարիներ շարունակ զբաղվել է հայ և մյուս ժողովուրդների բանահյուսության, բանահավաքների, աշուղների կյանքի ու գործունեության ուսումնասիրությամբ։ Մաքսիմ Գորկու ղեկավարությամբ և նրա հետ միասին Արշարունին ընթերցողներին է ներկայացրել Արևելյան բանահյուսության գանձերը։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Մոսկվայի հայ մամուլը» մենագրությունը, որը լույս է տեսել Երևանում 1971 թ.՝ պրոֆ. Արամյան Մնացականյանի խմբագրությամբ։ Այն առաջին փորձն էր արխիվային հարուստ նյութերի և գրականության հիման վրա լուսաբանել ռուսահայ գաղութներից մեկի՝ Մոսկվայի հայ պարբերական մամուլի պատմությունը՝ սկզբից մինչև 1920 թ.։ Աշխատությունը բաղկացած է 5 գլխից՝ «Մոսկվայի հայ գաղութի և նրա մամուլի տեսությունը», «Մոսկվայի հայ մամուլի առաջնեկը», «Մսերյանցների հրատարակած պարբերականները», «Մոսկվայի հայ պարբերականները 19-րդ դ. 80—90-ական թթ.», «Էմիգրանտ ազգադրական ժողովածուն—հայ բանահյուսության և լեզվաբանու-

թյան գանձարան», «Գարուն», «Մարտ», «Մոսկվայի հայ համայնքի ռուսերեն հրատարակությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին», «Մովետական պարբերականները Մոսկվայում»: Արշարունին ըստ արժանվույն ներկայացնում է հայ պարբերական մամուլի պատմության երախտավորներին և հատկապես հայ մշակույթի բազմավաստակ ներկայացուցիչ Գարեգին Լևոնյանին:

Մոսկվայի հայերեն և ռուսերեն լեզուներով հայագիտական, հայությանը աղերսով հրատարակությունները Արշարունին դիտում է որպես հայ-ռուսական բարեկամական կապերի զարգացման և ամրապնդման փաստեր: Հատկապես նշելով XIX դ. 60-ական թվականներին Մոսկվայում լույս տեսած «Հյուսիսսփայլի» պատմական նշանակությունը, Արշարունին միաժամանակ նկատում է, որ կիսաստվերի տակ է մնացել նրա գլխավոր խմբագիր և հրատարակիչ Ստեփանոս Նազարյանցը: Այս բացը վերջին տարիներին լրացվեց Ռուզան Նանումյանի՝ Նազարյանցին նվիրված աշխատություններով:

Ներկայացնելով Մոսկվայում 1901—1916 թթ. լույս տեսած էմիյան-ազգագրական ժողովածուն, որպես հայ բանահյուսության և լեզվաբանական գանձարան, Արշարունին կարևորում է, մասնավորապես, հայագիտական գործերը: Արշարունին բարձր է գնահատել Մոսկվայում (1916—1918 թթ.) հրատարակված «Արմյանսկի վեստնիկ» պարբերականի էջերում տպագրված հոդվածները: Այդ հանդեսի փաստական խմբագիրը Ալեքսեյ Զիվելեգովն էր, որը հետագայում ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անգամ: Ռուսերեն լեզվով լույս տեսնող «Արմյանսկի վեստնիկ» պատկերազարդ շաբաթաթերթն անխզելիորեն կապված էր հայ մշակույթի հետ, նրա էջերում արժեքավոր տեղեկություններ կան I համաշխարհային պատերազմի, կովկասյան ռազմաճակատի գործողությունների, հայ կամավորական շարժման, նրա հերոսներ Անդրանիկի, Քեռու և մյուսների, Հայկական հարցի մասին: Հանդեսին աշխատակցում էին Հ. Թումանյանը, Վ. Տերյանը, Ա. Սատուրյանը, Լեոն, Գևորգ Բաշինջաղյանը, Վրթանես Փափազյանը, Վահան Տոտումյանցը և ուրիշներ: Հանդեսին մեծ օգնություն էին ցույց տալիս Մ. Գորկին, Վ. Բրյուսովը, հայր և որդի Վեսելովսկիները, Ն. Մառը, որոնք գրում էին նաև հայ ժողովրդի պատմական անցյալի և ներկայի մասին:

Բազմակողմանի է Արշարունու դասախոսական գործունեությունը: Նրա դասախոսությունները և ելույթները լավում էին մեծ հետաքրքրությամբ: «Հանդիպումներ անցյալի հետ» գրքում, դասախոսություններում, զրույցներում Արշարունին սիրով է պատմում իր հանդիպումների մասին՝ Լենինի, Գորկույ, Լունաչարսկու, Կրուպսկայայի, Կլարա Յետկինի, Ջեքոնսկու, Ռաբինդրանատ Տագորի, Մ. Սարյանի, Ավ. Խաչակյանի, Ա. Նազարբեկյանի, Մ. Շահինյանի և այլ պատմական գործիչների հետ: 1982 թ. ծրեանում լույս է տեսնում Արշարունու «Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը» գրքի 2-րդ բարեփոխված հրատարակությունը՝ Վ. Հայրապետյանի առաջարկով: Ընթերցողների կողմից ջերմ ընդունելություն գտած այս մենագրությունը հայ-ռուսական մշակութային կապերի մասին լավագույն գործերից է:

Ա. Արշարունին հիմնականում գտնվելով Մոսկվայում, մշտական ու սերտ կապերի մեջ էր Հայաստանի, հայ գործիչների, սփյուռքահայության հետ: Մոսկվայի նրա բնակարաններում միշտ կարելի էր տեսնել հայ ժողովրդի զավակներին, որոնք դիմում էին նրան տարբեր հարցերով, ստանում նրա խորհուրդները, օգնությունը: Իսկապես, մարդկային այդ անհատի համար միշտ ժամանակ և հնարավորություն էր գտնվում ձեռք մեկնելու նրանց: Արշարունու գրչին են պատկանում բազմաթիվ գրախոսականներ հայ մշակույթի և պատմության վերաբերյալ, թեկնածուական և դոկտորական դիսերտացիաների, գրքերի մասին, իրոք, այդ խստամբեր մթնոլորտում: Նա

առաջիններից էր, որ արժեքավորեց Գ. Հովնանի «Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ դդ.» հիմնարար աշխատությունը:

Արժեքավոր է Արշարունու անձնական ֆոնդը, որի մի մասը գտնվում է Հայաստանի Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում:

1982 թ. հունվարին Մոսկվայում, Գրողների ստեղծագործական տանը, կազմակերպվեց Արշարունու ծննդյան 85-ամյակին նվիրված ստեղծագործական երեկո: Ժողովին մասնակցում էին և ելույթներ ունեցան. Մոսկվայի գրական կազմակերպության շատ ականավոր դեմքեր, որոնք նշեցին Արշարունու խոշոր ավանդը գրականության և արվեստի զարգացման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման բնագավառում:

Ա. Արշարունին մահացել է 1985 թ. հոկտեմբերի 21-ին, Մոսկվայում: Անշուշտ, նրա մասին կգրվեն արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք կլուսաբանեն հայ մշակույթի երախտավորի ավանդը հայագիտության բնագավառում:

ЗАСЛУЖЕННЫЙ ДЕЯТЕЛЬ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

Г. Б. ГАРИБДЖАНИЯН

Академик НАН РА

Р е з ю м е

Видный писатель, литературовед, искусствовед, книговед, переводчик, журналист, профессор, заслуженный деятель искусств Армении, член Союза писателей СССР с 1934 г. Аршалуйс Михайлович Аршаруни (1896—1985) родился в Карсской области, в городе Кагызмане. Писал на армянском и русском языках.

Он был одним из основателей и редакторов «Литературной энциклопедии». Его перу принадлежат многочисленные книги и статьи об истории армянского театра, о судьбах известных книг, об армянском эпосе «Давид Сасунский» и др.

В своих воспоминаниях Аршаруни рассказывает о встречах с В. И. Лениным, А. Луначарским, М. Горьким, К. Цеткин, А. Исаакианом, М. Сарьяном, С. Кочаряном и др. видными деятелями.

Аршалуйс Михайлович Аршаруни скончался 21 октября 1985 г. в Москве. Часть его богатого личного архива находится в Музее литературы и искусства им. Е. Чаренца в г. Ереване.